ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ մասի 2-րդ կետի, 4-րդ և 5-րդ մասերի, 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) կանոնադրության 7.1 (1, 2), 7.4 (2), 7.5, 7.6, 7.7, 7.8, 14.1, 14.2 և 17.3 (27) կետերի պահանջներով,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել փոփոխել (լրացնել) Փաստաբանների պալատի կանոնադրությունը և Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, ինչպես նաև որոշել «Փաստաբանի օր»-ը,

հաշվի առնելով այն, որ Փաստաբանների պալատի խորհրդի 27.09.2019թ. թիվ 18/10-Լ և 18/11-Լ որոշումներով հաստատվել են մշակման արդյունքում կազմված «Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» և «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումների նախագծերը, ինչպես նաև որոշվել է նշված նախագծերը ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09^{00}-ից ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1) ***Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.***
2) ***Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.***

30 սեպտեմբեր 2019թ.
թիվ 387-Լ

3) «Փաստաբանի օր» սահմանելու մասին:

2. Սահմանել, որ՝

2.1. օրակարգային հարցերով քվեարկությունը (ընտրությունը) սկսվում է 2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18^{00}-ին.

2.2. «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների խմբերը և/կամ աշխատանքային խումբը կարող են (է) փաստաբանի օրվա հետ կապված առաջարկները (առաջարկը) սահմանված կարգով ներկայացնել 2019 թվականի հոկտեմբերի 1-ից (ներառյալ) մինչև 2019 թվականի հոկտեմբերի 10-ը (ներառյալ):

3. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. Հաստատել ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

5. ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումների նախագծերը:

6. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական տնօրենին՝

- *ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի մասին ծանուցել փաստաբաններին՝ էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու, 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթում ծանուցումը տպագրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 7-2) հայտարարությունների ցուցատախտակին ծանուցումը հրապարակելու միջոցով.*
- *օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

30 սեպտեմբեր 2019թ.
թիվ 387-Լ
ք. Երևան